ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/69 « 30 » 01 2020թ.

Ձեր

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ00482736)
տնօրեն Ա. Երիջանյանին
ք.Երևան, Նորք 1-ին նրբ., փ. 5
էլ. հասցե՝ infinityspy1999@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 29.04.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՀԳԿԵՆՑ/2019-3/6» ծածկագրով տնտեսական ապրանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 1000 հատ՝ հատակի լվացման լաթ, 1000 հատ՝ ավել սովորական, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 29.04.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՀԳԿԵՆՑ/2019-3/6» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից, իսկ «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 500005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել՝ Պայմանագրի 6.2-րդ կետով հաշվարկված գումարը՝ 142273 /մեկ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 91425 /իննսունմեկ հազար չորս հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա. Ներսիսյան***

հեռ. /010/ 59-60-21
Լ. Սահակյան